ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Մարմարիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Մաթեմատիկա>> առարկայի(8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.դիմում/Ձև 1/,մեկ լուսանկար 3x4 չափի,

2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/,

3.անձը հաստատող փաստաթուղթ,

4.ինքնակենսագրություն/Ձև 5/,

5.<<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/.

6.այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,

8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/առկայության դեպքում/,

9.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատումէ պատճենների հետ և բնօրինակները հետ վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. սեպտեմբերի 7-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ,ամեն օր՝ժամը 10:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին, ժամը 14:00,ՀՀ Կոտայքի մարզի Մարմարիկի միջն. դպրոցում:

Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ,գյուղ Մարմարիկ, 4-րդ փողոց,2-րդ նրբանցք,շենք 14:

Տեղեկությունների համար զանգահարել 093-94-95-65 հեռախոսահամարին: